

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2018 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի կատարած աշխատանքների վերաբերյալ

Հաշվետու ժամանակաշրջանում բաժինը շարունակել է համագործակցությունը ՀՀ ոստիկանության մարզային վարչության տարածքային բաժինների անչափահասների գործերով զբաղվող ծառայությունների հետ: 1-ին կիսամյակում հաշվառման է վերցվել մարզի 2 իրավախախտ, որից 1 -ը հանվել է հաշվառումից մայիս ամսին: Բաժնի աշխատակիցները մասնակցել են ընտանեկան բռնության դեպքերի և անչափահասների գործերի հարցաքննությանը՝ իրականացրել իրավունքների և շահերի պաշտպանություն: Պրոֆիլակտիկ աշխատանքներ են իրականացվել իրենց երեխաների վրա բացասական ներգործություն ունեցող, հակասոցիալական վարք դրսևորող ծնողների հետ: Մարզի հանրակրթական դպրոցներում ոստիկանության մարզային վարչության տարածքային բաժինների ԱԳ խմբերի հետ ԸԿԵԻՊ բաժնի աշխատակիցը մասնակցել է «Վնասակար սովորույթներ», «Անվտանգ երթևեկություն», «Անչափահասը և իրավունքը» թեմաներով զրույց-զեկույցներին: ՀՀ Ոստիկանության պետի 2013թ. նոյեմբերի 7-ի №3837 – Ա հրամանով ստեղծված միջգերատեսչական աշխատանքային խմբի հետ մուրացկանության և թափառաշրջիկության, անչափահասների թրաֆիքինգի խնդիրների կանխարգելման և իրազեկման նպատակով իրականացվել են հանդիպումներ, զրույցներ մարզի ուսումնական հաստատություններում, առողջապահական հիմնարկներում և համայնքներում: Մարզում չկան մուրացիկ և թափառաշրջիկ, շահագործման (թրաֆիքինգի) ենթարկված երեխաներ: Բաժինը եռամսյակ մեկ մասնակցում է ՀՀ ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչությունում կայացող միջգերատեսչական աշխատանքային խմբի նիստին: Մարզում հանրակրթությունից դուրս մնացած երեխաներ չկան:

Ուսումնասիրության և համայնքներում գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների հետ համատեղ աշխատանքի արդյունքում 2018 թվականի առաջին կիսամյակում կատարվել է մարզի կյանքի դժվարին իրավիճակում հայտնված 37 երեխայի կարիքի գնահատում: Մարզում հաշվառված է մանկուց հաշմանդամ 128, միակողմանի ծնողազուրկ՝ 182 և 15 առանց ծնողական խնամքի մնացած երեխա: Մեկ երեխա ուղեգրվել է Նոր Խարբերդի մտավոր հետամնացություն ունեցող երեխաների մասնագիտացված հաստատություն, երկու երեխա գիշերօթիկ խնամքի հաստատությունից տեղափոխվել է կենսաբանական ընտանիք:

Բաժինը մշտապես անհրաժեշտ մեթոդական օգնություն է ցուցաբերում ներառական կրթություն իրականացնող հանրակրթական 10 դպրոցների բազմամասնագիտական թիմերին: Հաշվետու ժամանակահատվածում որդեգրման 1 դիմում մերժվել է՝ իրավական հիմքերի բացակայության պատճառով: Գործընթացի մեջ է հաշվառված երկու

քաղաքացու ողբգրման գործ՝ իրականացվում է նախընտրելի երեխայի որոնման աշխատանք՝ օրենքով սահմանված կարգով:

Բաժինը սերտորեն համագործակցել է մարզի ՏԻՄ մարմինների հետ, կանոնադրական գործառույթների շրջանակում ցուցաբերել անհրաժեշտ մեթոդական խորհրդատվություն խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովներին, մասնակցել Վայք համայնքի վարչական հսկողության աշխատանքներին, աջակցել ընտանեկան հակասությունների և տարաձայնությունների խնդրի լուծմանը Վայք, Մալիշկա, Եղեգիս համայնքներում՝ հաշվի առնելով երեխայի գերակա շահը: Բաժինն ամենօրյա խորհրդատվական և ուղղորդման աշխատանքներ է իրականացնում քաղաքացիների հետ կանաոնադրական գործառույթների շրջանակում:

Բաժնի աշխատանքների մեջ զգալի տեղ է գրավում համագործակցությունը երեխաների իրավունքների պաշտպանության և կանանց հիմնախնդիրներով զբաղվող հասարակական կառույցների («Սոցիալ-հոգեբանական հետազոտությունների և վիճակագրության կենտրոն») ՀԿ, «Երեխաների պաշտպանության ցանց» ՀԿ, «Մանկական զարգացման հիմնադրամ» ՀԿ, «Սեռական բռնության ճգնաժամային կենտրոն» ՀԿ, «Կանանց ռեսուրս կենտրոն» ՀԿ, «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամ) հետ, իրականացվել են մի շարք հանդիպումներ, կլոր սեղաններ և դասընթացներ: Բաժնի նախաձեռնությամբ «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամը մարզում իրականացրել է աջակցության ծրագրեր՝ Ագարակաձոր համայնքում միայնակ մոր ընտանիք ստացել է դրամական և նյութական աջակցություն (կենցաղային տեխնիկա, գույք, անկողնային պարագաներ, սնունդ), Հորբատեղ համայնքի բազմազավակ մեկ ընտանիք օգտվել է գյուղատնտեսական ծրագրից՝ տրամադրվել է խոշոր եղջերավոր անասուններ, սոցիալապես անապահով 250 ընտանիքի տրամադրվել է սնունդ:

Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժինը ժամանակին և սահմանված կարգով քաղաքացիներից ստացած դիմումներին տվել է համապատասխան լուծում:

Ա.Գրիգորյան

Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի ԸԿԵԻՊ բաժնի պետ